«ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ
2022թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., նշված ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև նշված ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք ներկա չենք գտնվել Ընկերության պաշարների գույքագրմանը, որոնք ներկայացված են 13,256,068 հազար դրամ գումարով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, քանի որ նշանակվել ենք որպես Ընկերության աուդիտորներ 2023թ. ապրիլի 25-ին: Արդյունքում, մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլիներ ճշգրտումներ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների, ինչպես նաև 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական վիճակի, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների համապատասխան տարրերի գծով:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Էական անորոշություն գործունեության անընդհատության հետ կապված

Ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 1-ի (գ) և (դ) կետերին, որտեղ նշվում է, որ աշխարհաքաղաքական լարվածությունը և մի շարք երկրների կողմից կիրառվող պատժամիջոցները, որոնք ուղեկցվում են տատանումներով ապրանքային, ֆոնդային և արժութային շուկաներում, կարող են նշանակալի ազդեցություն ունենալ «ՌՈՒՍԱԼ» ԽՄԲի (Բաժնետերերի խումբ) ընկերությունների գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեության վրա: Մենք նաև ուշադրություն ենք հրավիրում Ծանոթագրություն 1-ի (ա) կետին և Ծանոթագրություն 23-ին, որտեղ ներկայացված է Ընկերության կախվածությունը Բաժնետերերի խմբից և կապակցված կողմերի հետ գործարքների զգալի ծավալն Ընկերության գործունեությունում:

Ինչպես նշվում է Ծանոթագրություն 1-ի (դ) կետում, այս հանգամանքները վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող է նշանակալի կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Ընկերության կարողության վերաբերյալ:

Մեր կարծիքը ձևափոխված չէ այս հարցերի հետ կապված:

Այլ հանգամանք

Ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2022թ. հունիսի 3-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին

կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
3 հուլիսի 2023թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	32,484,120	29,106,886
Շահութահարկի գծով ակտիվ		499,431	505,533
Կանխավճարներ մատակարարներին		506,930	391,103
Ոչ ընթացիկ ակտիվներ		**33,490,481**	**30,003,522**
Պաշարներ	13	13,256,068	18,754,950
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	6,426,989	6,987,806
Շահութահարկի գծով ակտիվ		484,913	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	158,667	19,584
Ընթացիկ ակտիվներ		**20,326,637**	**25,762,340**
Ընդամենը ակտիվներ		**53,817,118**	**55,765,862**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	36,699,295	36,699,295
Լրացուցիչ կապիտալ		28,683,833	28,683,833
Կուտակված վնաս		(53,001,454)	(52,477,350)
Ընդամենը սեփական կապիտալ		**12,381,674**	**12,905,778**
Պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	3,229,208	3,320,233
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,229,208**	**3,320,233**
Վարկեր և փոխառություններ	18	12,130,283	15,311,076
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19	26,075,953	24,228,775
Ընթացիկ պարտավորություններ		**38,206,236**	**39,539,851**
Ընդամենը պարտավորություններ		**41,435,444**	**42,860,084**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**53,817,118**	**55,765,862**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 43-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2022թ.	2021թ.
Հասույթ	5	55,829,809	59,252,319
Վաճառքի ինքնարժեք	6	(58,861,710)	(52,006,504)
Համախառն (վնաս)/շահույթ		**(3,031,901)**	**7,245,815**
Իրացման ծախսեր	7	(566,245)	(545,928)
Վարչական ծախսեր	8	(2,131,312)	(1,806,468)
Զուտ այլ գործառնական ծախսեր	9	(1,244,904)	(373,996)
Գործառնական գործունեության արդյունքներ		**(6,974,362)**	**4,519,423**
Ֆինանսական եկամուտ		6,359,233	1,233,938
Ֆինանսական ծախսեր		-	(2)
Զուտ ֆինանսական եկամուտ	10	**6,359,233**	**1,233,936**
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**(615,129)**	**5,753,359**
Շահութահարկի գծով օգուտ/(ծախս)	11	91,025	(905,778)
Ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար		**(524,104)**	**4,847,581**

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2023թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Ա. Շահբազյան
Գլխավոր տնօրեն

Վ. Սուվայան
Ֆինանսական տնօրեն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 43-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	36,699,295	28,683,833	(57,324,931)	8,058,197
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	4,847,581	4,847,581
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**36,699,295**	**28,683,833**	**(52,477,350)**	**12,905,778**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	36,699,295	28,683,833	(52,477,350)	12,905,778
Ընդամենը համապարփակ վնաս				
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(524,104)	(524,104)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**36,699,295**	**28,683,833**	**(53,001,454)**	**12,381,674**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 43-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2022թ.	2021թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր վաճառքից		42,402,087	57,062,356
Վճարումներ մատակարարներին		(34,542,938)	(53,673,490)
Վճարումներ աշխատակիցներին		(3,070,815)	(2,880,954)
Ստացված ԱԱՀ և ակցիզային հարկ		2,076,872	1,917,344
Վճարված ԱԱՀ և ակցիզային հարկ		(735,267)	(630,188)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի		(1,043,074)	(1,122,879)
Կնախավճար շահութահարկի գծով		(484,913)	-
Այլ վճարումներ		(13,235)	(11,922)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**4,588,717**	**660,267**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		19,486	59,000
Հիմնական միջոցների ձեռքբերում		(4,371,360)	(755,819)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(4,351,874)**	**(696,819)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**236,843**	**(36,552)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		19,584	63,822
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(97,760)	(7,686)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	15	**158,667**	**19,584**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 43-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2022թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

	Ծանոթագրություն	Էջ
1	Հաշվետու ընկերություն	11
2	Հաշվապահական հաշվառման հիմունքներ	13
3	Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	13
4	Գնահատումների և դատողությունների օգտագործում	13
5	Հասույթ	14
6	Վաճառքի ինքնարժեք	15
7	Իրացման ծախսեր	15
8	Վարչական ծախսեր	16
9	Զուտ այլ գործառնական ծախսեր	16
10	Զուտ ֆինանսական եկամուտ	16
11	Շահութահարկի գծով օգուտ/(ծախս)	17
12	Հիմնական միջոցներ	19
13	Պաշարներ	20
14	Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	20
15	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21
16	Կապիտալ և պահուստներ	21
17	Կապիտալի կառավարում	22
18	Վարկեր և փոխառություններ	22
19	Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	23
20	Իրական արժեք և ռիսկերի կառավարում	23
21	Պայմանական դեպքեր	28
22	Հանձնառություններ	29
23	Գործարքներ կապակցված կողմերի հետ	29
24	Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ	31
25	Չափման հիմունքներ	31
26	Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր	31
27	Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	42

1 Հաշվետու ընկերություն

(ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ն (Ընկերություն) փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է 2000թ. դեկտեմբերին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 268 որոշման (17 մայիսի 2000թ.) և ՀՀ կառավարության (ի դեմս «Կանաչ» ՓԲԸ) ու «Յունայթիդ Քամփընի Սիբիրսկիյ Ալյումինիյ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված հիմնադրման պայմանագրի (21 հունիսի 2000թ.):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0051, Գրիբոեդովի փող. 25:

Ընկերության հիմնական գործունեությունն ալյումինե փայլաթիթեղի արտադրությունն ու իրացումն է:

Ընկերության անմիջական մայր ընկերությունն է Ջերսիում գրանցված «ՌՈՒՍԱԼ ԼԻՄԻԹԻԴ» ընկերությունը:

Ընկերությունն ամբողջությամբ պատկանում է UC RUSAL, IPJSC («ՌՈՒՍԱԼ միացյալ ընկերություն» միջազգային հրապարակային բաժնետիրական ընկերություն) («UCR», նախկին «ՌՈՒՍԱԼ միացյալ ընկերություն» ՀՍՊԸ) և վերջինիս անուղղակի դուստր ընկերությունն է: «UC RUSAL»-ի իրավաբանական հասցեն է՝ Ջանել կղզիներ, JE4 9WG, Ջերսի, Սենտ Հելիեր, Էսպլանադ 44, 3-րդ հարկ: 2020թ. սեպտեմբերի 25-ին «UC RUSAL»-ը փոխեց իր գտնվելու վայրը և տեղակայվեց Ռուսաստանի Դաշնություն՝ գրանցելով որպես UC RUSAL, IPJSC: 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տնօրենները «UCR»-ի անմիջական մայր ընկերություն են «EN+ Գրուպ» միջազգային հրապարակային բաժնետիրական ընկերությունը («EN+ԳՐՈՒՊ» ՄՀԲԸ, «EN+», նախկին «En+ Գրուպ» ՀՍՊԸ), որը հիմնադրվել էր Ջերսիում և որի իրավաբանական հասցեն էր՝ Ջանել կղզիներ, JE4 9WG, Ջերսի, Սենտ Հելիեր, Էսպլանադ 44: 2019թ. հուլիսի 9-ին, «EN+»-ը փոխեց իր գտնվելու վայրը և տեղակայվեց Ռուսաստանի Դաշնություն՝ գրանցելով որպես «EN+ԳՐՈՒՊ» ՄՀԲԸ: Հաշվետու ամսաթվի դրությամբ «EN+»-ի իրավաբանական հասցեն է Ռուսաստանի Դաշնություն, 236006, Կալինինգրադի մարզ, Կալինինգրադ, Օկտյաբրսկայա փող. 8, գրասենյակ 34:

Հիմք ընդունելով այս ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Ընկերության տրամադրության տակ գտնվող հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը՝ Օլեգ Դերիպասկան ունի 25%-ը գերազանցող անուղղակի մասնակցություն «UCR»-ում: Չկա որևէ ֆիզիկական անձ, որը հնարավորություն ունի հսկողություն իրականացնել «UCR»-ի նկատմամբ:

Ընկերությունը ֆինանսավորման մեծ մասը ստանում է «ՌՈՒՍԱԼ» Խմբի ընկերություններից (Բաժնետերերի խումբ), որոնց հետ է կապված նաև Ընկերության պարտքային ռիսկը: Արդյունքում, Ընկերությունը տնտեսական կախման մեջ է գտնվում Բաժնետերերի խմբից: Բացի այդ, Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է Բաժնետերերի խմբի պահանջների հետ, և Բաժնետերերի խմբին կատարվող վաճառքների գները որոշվում են Բաժնետերերի խմբի այլ ընկերությունների հետ համատեղ:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում:

Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(գ) Պատժամիջոցներ

2018թ. ապրիլի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Ֆինանսների նախարարության Օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչությունը (ՕԱՎՎ) որոշակի իրավաբանական և ֆիզիկական անձանց ներառել էր իր Հատուկ կատեգորիաների քաղաքացիների և արգելված անձանց ցուցակում (ՕԱՎՎ պատժամիջոցներ): Նշված անձանց շարքում էր «ՌուսԱլ ԱրմենԱլ» ՓԲԸ-ի միջանկյալ մայր ընկերությունը՝ «UCR»-ը:

Արդյունքում, ԱՄՆ-ում գտնվող կամ ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող «UCR»-ի և վերջինիս դուստր ընկերությունների ամբողջ գույքը կամ մասնակցությունները գույքում արգելափակվել էին, սառեցվել էին, չէին կարող փոխանցվել, օգտագործվել որպես վճարման միջոց, արտահանվել, օտարվել կամ որևէ այլ կերպ օգտագործվել: Ցուցակում ներառվելուց հետո տրամադրվեցին մի քանի գլխավոր լիցենզիաներ, որոնք հետագայում թույլատրեցին որոշ գործարքների իրականացումը «UCR»-ի, վերջինիս հիմնական բաժնետեր՝ «En+»-ի, դրանց պարտավորությունների և սեփական կապիտալի հետ:

2019թ. հունվարի 27-ին ՕԱՎՎ-ն հայտարարեց «UCR»-ին և «En+»-ին ՕԱՎՎ-ի Հատուկ կատեգորիայի քաղաքացիների և արգելված անձանց ցուցակից հանելու իր որոշման մասին, որն անմիջապես մտավ ուժի մեջ: Այդ ընկերություններին ցուցակից հանելու համար պետք է բավարարվեին մի շարք պայմաններ, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. փոփոխություններ կորպորատիվ ղեկավար կազմում, որոնք, ի թիվս այլնի, նախատեսում են Խորհրդի կազմի փոփոխություն, որի նպատակն է ապահովել անկախ տնօրենների գերակայությունը Խորհրդի կազմում, Խորհրդի նախագահի փոփոխությունը, «UCR»-ն պետք է կանոնավոր հիմունքով հաշվետվություններ ներկայացնի ՕԱՎՎ-ին, որոնք կհաստատեն համապատասխանությունը ցուցակից հանելու պայմանների հետ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման օրվա դրությամբ ՕԱՎՎ-ի կողմից սահմանված չէր որևէ պատժամիջոց Ընկերության կամ վերջինիս անմիջական, միջանկյալ կամ վերջնական ընկերությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, Օլեգ Դերիպասկան ներառված է ՕԱՎՎ-ի Հատուկ կատեգորիաների քաղաքացիների և արգելված անձանց ցուցակում:

(դ) Էական անորոշություն գործունեության անընդհատության հետ կապված

2022թ. մարտին Ավստրալիայի կառավարության կողմից սահմանված Ռուսաստան ալյումինի և բոքսիտի արտահանման արգելքը և Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով 2022թ. մարտի 1-ից արտադրության ժամանակավոր դադարեցումը Mykolaiv Alumina Refinery Company Ltd-ում ազդեցություն են ունեցել ալյումինի և բոքսիտի հասանելիության վրա և նպաստել է Բաժնետերերի խմբի գնման գների աճին: Լոգիստիկայի հետ կապված դժվարությունների պատճառով Բաժնետերերի խումբը վերակազմավորեց մատակարարման և վաճառքի շղթաները, ինչը հանգեցրեց լոգիստիկայի հետ կապված ծախսերի ավելացմանը:

2023թ. մարտին ԱՄՆ-ն 200% տուրք է սահմանել Ռուսաստանի ծագումով՝ առաջնային ալյումինի ցանկացած քանակությամբ ալյումինե իրերի համար: Դա հանգեցրեց ԱՄՆ-ի հետ իրականացվող Ընկերության վաճառքների ծավալի կրճատմանը, որը Ընկերությունը կարողացավ փոխարինել Եվրոպա կատարվող մատակարարումներով:

Եթե իրավիճակն Ուկրաինայում և ընդհանուր աշխարհաքաղաքական լարվածությունը շարունակվի և ուղեկցվի արտաքին շուկաներում զգալի մասնաբաժինների կորստով, որոնք հնարավոր չի լինի վերաբաշխվել նոր շուկաներում, դա կարող է ազդեցություն ունենալ Բաժնետերերի խմբի բիզնեսի, ֆինանսական վիճակի, հեռանկարների և գործունեության արդյունքների վրա:

Վերը նկարագրված փաստերը, Բաժնետերերի խմբից Ընկերության գործառնությունների կախվածության հետ մեկտեղ, էական անորոշություն են ստեղծում անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու և պարտականությունները սահմանված ժամկետում կատարելու Ընկերության կարողության հետ կապված:

Ղեկավարությունը շարունակաբար գնահատում է ընթացիկ իրավիճակը և պատրաստում է կանխատեսումներ՝ հաշվի առնելով իրադարձությունների և պայմանների զարգացման տարբեր սցենարները:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

2 Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան կազմելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է Ծանոթագրություն 26 (է) (iii) կետում՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ:

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի չափում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարված ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում՝ իրական արժեք և ռիսկերի կառավարում:

5 Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Հասույթ ալյումինե փայլաթիթեղի վաճառքից	55,823,055	59,246,684
Այլ	6,754	5,635
	55,829,809	**59,252,319**

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական տարածաշրջանների շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար **հազ. դրամ**	**2022թ.**	**2021թ.**
Հիմնական շուկաներն ըստ աշխարհագրական տարածաշրջանների		
Եվրոպական երկրներ	54,093,282	50,871,781
ԱՄՆ	1,130,965	7,265,385
Ասիա	-	972,356
ԱՊՀ երկրներ	605,562	142,797
	55,829,809	**59,252,319**
Հասույթի ճանաչման ժամկետներ		
Ժամանակի որոշակի պահին փոխանցված ապրանքներ	55,829,809	59,252,319
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**55,829,809**	**59,252,319**

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ծառայության տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականություն
Ապրանքների վաճառք	Այս պայմանագրերն իրենցից ներկայացնում են ալյումինե փայլաթիթեղի վաճառքի պայմանագրեր: Պատվիրատուն հսկողության իրավունք է ստանում մատակարարված ապրանքների նկատմամբ ապրանքները տրամադրելու պահին, երբ ռիսկերը փոխանցվում են պայմանագրում նշված Ինկոտերմսի մատակարարման պայմանների համաձայն: Հաշիվները դուրս են գրվում և հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին: Հաշիվները որպես կանոն վճարվում են 120 օրվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է, երբ պատվիրատուն հսկողության իրավունք է ստանում ապրանքների նկատմամբ (Ինկոտերմսի շրջանակում):

6 Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Նյութեր	49,605,184	43,492,362
Էլեկտրաէներգիա	4,358,057	3,999,855
Աշխատավարձ	2,725,648	2,578,036
Մաշվածություն	1,540,451	1,394,542
Այլ ծախսեր	632,370	541,709
	58,861,710	**52,006,504**

7 Իրացման ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Փոխադրման ծախսեր*	441,544	425,358
Աշխատավարձ	36,703	34,435
Օգտագործված նյութեր	32,980	31,181
Մաքսային տուրքեր	26,028	24,782
Արտադրանքի սերտիֆիկացման ծախսեր	4,200	2,725
Այլ	24,790	27,447
	566,245	**545,928**

* Փոխադրման ծախսերը կախված են վաճառքի պայմանագրի Ինկոտերմսից: Ընկերությունը հիմնականում օգտագործում է Ինկոտերմսի DAP (հասցրած մինչև համաձայնեցված վայր) և FCA (մինչև բեռնափոխադրողի մոտ) պայմանները:

8 Վարչական ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձ	1,147,890	1,126,442
Սպասարկման ծախսեր	243,700	107,122
Կոմունալ և կապի ծառայություններ	82,869	113,540
Փոխադրման ծախսեր	77,346	22,705
Գույքի ապահովագրություն	66,751	46,217
Մաշվածություն	52,560	38,898
Ներկայացուցչական և գործուղումների ծախսեր	36,423	15,629
Աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների վճարներ	29,640	25,572
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրերի գծով ծախսեր	29,061	21,024
Բանկային ծառայությունների վճարներ	11,949	13,022
Այլ	353,123	276,297
	2,131,312	**1,806,468**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար անձնակազմի գծով ընդհանուր ծախսերը կազմել են 3,895,820 հազար դրամ (2021թ-ին՝ 3,731,228 հազար դրամ):

9 Զուտ այլ գործառնական ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Արժույթի փոխարկման ծախսեր	(1,014,143)	(163,560)
Պաշարների արժեզրկում/դուրսգրում	(225,470)	(54,634)
Վնաս ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից	(21,780)	(2,653)
Հիմնական միջոցների արժեզրկում	(2,349)	(132,338)
Օգուտ պաշարների վաճառքից	27,235	3,964
Զուտ այլ ծախսեր	(8,397)	(24,775)
	(1,244,904)	**(373,996)**

10 Զուտ ֆինանսական եկամուտ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	6,359,232	1,233,931
Տոկոսային եկամուտ բանկային ավանդների գծով	1	7
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**6,359,233**	**1,233,938**
Տոկոսային ծախս բանկային երաշխավորությունների գծով	-	(2)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**-**	**(2)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ	**6,359,233**	**1,233,936**

11 Շահութահարկի գծով օգուտ/(ծախս)

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընկերությունը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2021թ-ին՝ 18%):

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ հարկի գումար	-	(808,189)
Հետաձգված հարկի գծով օգուտ/(ծախս)		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	91,025	(97,589)
Ընդամենը օգուտ/(ծախս) շահութահարկի գծով	**91,025**	**(905,778)**

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2022թ.		2021թ.	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը	(615,129)	100	5,753,359	100
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	110,723	18	(1,035,605)	18
Ընթացիկ տարվա վնաս, որի համար հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	(1,047,133)	(170)	-	-
Զուտ չհարկվող եկամուտ/զուտ չնվազեցվող ծախսեր	1,027,435	167	129,827	(2)
	91,025	**(15)**	**(905,778)**	**16**

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	(3,353,089)	(3,351,663)	(3,353,089)	(3,351,663
Պաշարներ	45,948	11,750	-	-	45,948	11,750
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	58,002	-	-	-	58,002	-
Պահուստներ	19,931	19,680	-	-	19,931	19,680
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**123,881**	**31,430**	**(3,353,089)**	**(3,351,663)**	**(3,229,208)**	**(3,320,233)**

(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

հազ. դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(3,351,663)	(1,426)	(3,353,089)
Պաշարներ	11,750	34,198	45,948
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	-	58,002	58,002
Պահուստներ	19,680	251	19,931
	(3,320,233)	**91,025**	**(3,229,208)**

հազ. դրամ	1 հունվարի 2022թ.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն (Ծնթգ. 12)	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(2,952,588)	(349,428)	(49,647)	(3,351,663)
Պաշարներ	(363,279)	349,428	25,601	11,750
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	93,223	-	(93,223)	-
Պահուստներ	-	-	19,680	19,680
	(3,222,644)	**-**	**(97,589)**	**(3,320,233)**

(դ) Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Հարկային վնաս	**1,047,133**	**-**

Հարկային վնասն առաջացել է 2022թ-ին և դրա օգտագործման ժամկետը լրանում է 2027թ-ին: Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել այս հոդվածների գծով, քանի որ քիչ հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Ընկերությունը կկարողանա օգտագործել այդ հոդվածներից ստացված օգուտները:

12 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հողատարածք և շենքեր	Անավարտ շինարա-րություն	Մեքենաներ և սարքավո-րումներ	Փոխադրա-միջոցներ	Տնտեսական միջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.՝ նախքան փոփոխությունները հաշվապահական հաշվառման քաղաքականությունում	5,866,440	29,623	35,694,449	495,287	434,655	-	42,520,454
Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում	-	-	3,330,420	-	-	-	3,330,420
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններից հետո	5,866,440	29,623	39,024,869	495,287	434,655	-	45,850,874
Ավելացումներ	-	274,443	1,082,809	17,672	30,956	-	1,405,880
Օտարումներ/դուրսգրումներ	(2,190)	-	(361,075)	-	(11,514)	-	(374,779)
Արժեզրկում	(80,017)	-	(52,321)	-	-	-	(132,338)
Տեղափոխումներ	37,461	(251,996)	214,252	283	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,821,694**	**52,070**	**39,908,534**	**513,242**	**454,097**	**-**	**46,749,637**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	5,821,694	52,070	39,908,534	513,242	454,097	-	46,749,637
Ավելացումներ	-	468,948	798,266	59,509	134,292	3,566,249	5,027,264
Օտարումներ/դուրսգրումներ	(2,915)	-	(144,869)	(15,070)	(873)	-	(163,727)
Տեղափոխումներ	14,850	(99,359)	82,039	-	2,470	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**5,833,629**	**421,659**	**40,643,970**	**557,681**	**589,986**	**3,566,249**	**51,613,174**
Մաշվածություն							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.՝ նախքան փոփոխությունները հաշվապահական հաշվառման քաղաքականությունում	1,142,263	-	13,338,615	278,585	324,038	-	15,083,501
Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում	-	-	1,389,151	-	-	-	1,389,151
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններից հետո	1,142,263	-	14,727,766	278,585	324,038	-	16,472,652
Տարվա մաշվածություն	64,468	-	1,334,345	46,706	43,075	-	1,488,594
Օտարումներ/դուրսգրումներ	(577)	-	(306,467)	-	(11,451)	-	(318,495)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,206,154**	**-**	**15,755,644**	**325,291**	**355,662**	**-**	**17,642,751**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	1,206,154	-	15,755,644	325,291	355,662	-	17,642,751
Տարվա մաշվածություն	64,933	-	1,444,988	51,511	41,370	-	1,602,802
Օտարումներ/դուրսգրումներ	(2,897)	-	(96,061)	(15,071)	(2,470)	-	(116,499)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,268,190**	**-**	**17,104,571**	**361,731**	**394,562**	**-**	**19,129,054**
Հաշվեկշռային արժեք							
Առ 1 հունվարի 2021թ.	4,724,177	29,623	24,297,103	216,702	110,617	-	29,378,222
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	4,615,540	52,070	24,152,890	187,951	98,435	-	29,106,886
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**4,565,439**	**421,659**	**23,539,399**	**195,950**	**195,424**	**3,566,249**	**32,484,120**

1,419,581 հազար դրամ գումարով մաշվածությունը (2021թ-ին՝ 1,394,542 հազար դրամ) գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 120,870 հազար դրամ գումարով մաշվածությունը (2021թ-ին՝ 43,313 հազար դրամ) ներառվել է պաշարների տարեվերջի մնացորդում, 52,560 հազար դրամ գումարով մաշվածությունը (2021թ-ին՝ 38,898 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում, 6,541 հազար դրամ գումարով մաշվածությունը (2021թ-ին՝ 5,155 հազար դրամ)՝ իրացման ծախսերի կազմում և 3,250 հազար դրամ գումարով մաշվածությունը (2021թ-ին՝ 6,686 հազար դրամ)՝ այլ ծախսերի կազմում:

2021թ. հունվարին սպասարկող սարքավորումների օգտակար ծառայության ժամկետները գործնական նպատակներով վերագնահատվել են մինչև 13-ից 120 ամիս գնահատված ժամկետը, քանի որ սպասարկող սարքավորումներն օգտագործվում են որպես բազմակի փոխարինվող սարքեր սարքավորումների համար, որի դեպքում պահանջում է սպասարկող սարքավորումները ճանաչել որպես հիմնական միջոցների միավորներ և կիրառել ՀՀՄՍ 16-ով սահմանված մոտեցումը ճանաչման և հետագա չափման ժամանակ:

Այլ հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են ուղղաթիռը, որն Ընկերությունը ձեռք է բերել Կանադայից 2022թ. սեպտեմբերի 1-ին՝ 3,566,249 հազար դրամով: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը դեռ չէր ստացել ակտիվը: Ղեկավարությունը մտադիր է օգտագործել այս ակտիվը ընդհանուր կորպորատիվ նպատակների համար:

13 Պաշարներ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Հումք և սպառողական նյութեր	9,806,103	6,237,583
Հումքը ճանապարհին	270,483	8,186,168
Պատրաստի արտադրանք	1,565,628	1,839,960
Անավարտ արտադրություն	1,613,854	2,491,239
	13,256,068	**18,754,950**

Պաշարները նվազեցվել են 189,883 հազար դրամով՝ մինչև իրացման զուտ արժեքը (2021թ-ին նման նվազեցում չի եղել): Արժեքի այս նվազեցումը ճանաչվել է որպես այլ ծախսեր 2022թ. ընթացքում (Ծանոթագրություն 9):

14 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	5,265,706	5,804,516
Կանխավճարներ	720,452	755,814
Փոխհատուցելի ԱԱՀ և ակցիզային հարկ	409,048	414,016
Այլ ստացվելիք հարկեր	23,364	13,101
Այլ դեբիտորական պարտքերի	8,419	359
	6,426,989	**6,987,806**

Պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Բանկային հաշիվների մնացորդներ	158,667	19,584
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	**158,667**	**19,584**

Տոկոսադրույքային ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

16 Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ	**Սովորական բաժնետոմսեր**	
	2022թ.	**2021թ.**
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	36,699,295	36,699,295
Հայտարարված բաժնետոմսեր – 1,000 դրամ անվանական արժեք	36,699,295	36,699,295

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ բաշխման ենթակա պահուստներ (2021թ-ին նման պահուստներ չկային):

2022թ. և 2021թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարել և չեն վճարել: 2022թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն առաջարկվել:

(գ) Լրացուցիչ կապիտալ

12,081,539 հազար դրամ (2021թ-ին՝ 12,081,539 հազար դրամ) դրամ գումարով լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է Բաժնետերերի խմբի ընկերությունների կողմից շուկայականից ցածր տոկոսադրույքով տրամադրված փոխառությունների՝ սկզբնական ճանաչման կամ երկարաձգման պահին իրական արժեքի և այդ փոխառությունների անվանական գումարների տարբերությունը:

16,602,294 հազար դրամ (2021թ-ին՝ 16,602,294 հազար դրամ) դրամ գումարով լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության բաժնետիրոջից (Բաժնետերերի խմբի ընկերություն) անվճար ստացված մուրհակների իրական արժեքը:

17 Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընդամենը պարտավորություններ	41,435,444	42,860,084
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(158,667)	(19,584)
Զուտ պարտավորություններ	**41,276,777**	**42,840,500**
Ընդամենը սեփական կապիտալ	**12,381,674**	**12,905,778**
Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3.3	3.3

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել:

18 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Արժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	**12,130,283**	**15,311,076**

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերից ստացված փոխառություններն արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսակիր չեն և ենթակա են մարման ըստ պահանջի՝ այդ մասին երեսուն բանկային օր առաջ ծանուցում ստանալով:

Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է զուտ պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող Ընկերության պարտավորությունների փոփոխությունների վերլուծությունը 2022թ. և 2021թ. համար: Այս պարտավորությունների տարրերը ներկայացված են որպես ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքեր դրամական հոսքերի մասին հաշվետվությունում:

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ առ 1 հունվարի	15,311,076	17,523,712
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(3,180,793)**	**(2,212,636)**
Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի	**12,130,283**	**15,311,076**

19 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ստացված կանխավճարներ	5,712	19,506,141
Առևտրական կրեդիտորական պարտքեր	10,083,729	4,395,193
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	137,616	124,692
Այլ կրեդիտորական պարտքեր	15,848,896	202,749
	26,075,953	**24,228,775**

Այլ կրեդիտորական պարտքերի կազմում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառված 15,617,229 հազար դրամ գումարը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 19,504,119 հազար դրամ գումարը՝ ներառված ստացված կանխավճարների կազմում) իրենից ներկայացնում է ապրանքների վաճառքի դիմաց կապակցված կողմից ստացված կանխավճարները: 2022թ. հոկտեմբերին կողմերի միջև կնքվել է առուվաճառքի պայմանագրի լրացում, համաձայն որի այդ կանխավճարները պետք է վերադարձվեն ըստ պահանջի ոչ ուշ, քան 2024թ. դեկտեմբերի 31-ը: Պայմանագրի փոփոխության համաձայն՝ կանխավճարները համարվում են ֆինանսական պարտավորություն, և 2022թ. ընթացքում այդ մնացորդների գծով ճանաչվել է 3,886,890 հազար դրամի չափով օգուտ փոխարժեքային տարբերություններից:

Առևտրական կրեդիտորական պարտքերի կազմում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառված 8,311,806 հազար դրամ գումարը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,361,536 հազար դրամ) իրենից ներկայացնում է ալյումինե ձուլակտորներ գնելու համար կապակցված կողմին վճարվելիք գումարը:

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

20 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին՝ դրանց կարճաժամկետայնության պատճառով:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս՝ Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 20 (բ) (ii),
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 20 (բ) (iii),
- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 20 (բ) (iv):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Մայր ընկերությունը պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

Մայր ընկերությունը վերահսկում է Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի հետ համապատասխանությունը և ուսումնասիրում է ռիսկերի կառավարման մեխանիզմի համապատասխանությունն Ընկերության վրա ներազդող ռիսկերին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և ֆինանսական կազմակերպությունների հետ գործարքների մնացորդների գծով:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

հազ. դրամ		**Հաշվեկշռային արժեք**	
	Ծնթգ.	**2022թ.**	**2021թ.**
Առևտրական դեբիտորական պարտքերի	14	6,426,989	6,987,989
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	158,667	19,584
		6,585,656	**7,007,573**

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունում չի գործում պարտքային ռիսկը կառավարող հատուկ քաղաքականություն պատվիրատուների համար, այնուամենայնիվ, Ընկերության հասույթի մոտ 98.85% (2021թ-ին՝: 99.76%) վերագրելի է կապակցված կողմ հանդիսացող մեկ պատվիրատուի հետ իրականացվող վաճառքի գործարքներին, և Ընկերությունը նախկինում էական վնասներ չի կրել այդ գործարքներից: Թեև դեբիտորական պարտքերի հավաքագրման վրա կարող են ազդեցություն ունենալ տնտեսական գործոնները, ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությանը չի սպառնում էական վնաս կրելու ռիսկ, և այդ պատվիրատուի գծով ռիսկը գնահատվում է որպես ցածր:

Ընկերությունը սահմանում է ցածր ռիսկը հետևյալ կերպ. հաճախորդը մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները քիչ հավանական է, որ նվազեցնեն պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու փոխառուի կարողությունը:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների դիմաց: Պարտքային ռիսկի գնահատումներն իրականացվում են որոշակի գումարը գերազանցող փոխառությունների համար դիմող բոլոր պատվիրատուների համար՝ բացառությամբ կապակցված կողմերի:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկային հաշիվների մնացորդները հիմնականում պահվում են բարձր վարկանիշ ունեցող բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ պայմանագրային կողմերից որևէ մեկը չի կատարի իր պարտականությունները: Հիմնական մնացորդները պահվում են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, որի վարկանիշը Ba3 է:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Իր ֆինանսական պահանջները կառավարելու համար Ընկերությունն օգտագործում է կապակցված կողմերից ստացված փոխառությունները: Այս փոխառությունները գրավով ապահովված չեն և տոկոսակիր չեն:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են ընդհանուր և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսային վճարումները:

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշանակալիորեն տարբեր գումարներով:

2022թ. **հազ. դրամ**	**Հաշվեկշռային արժեք**	**Պայմանագրային դրամական հոսքեր**	**Մինչև 2 ամիս**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից			
ԱՄՆ դոլարով	4,989,263	4,989,263	4,989,263
Եվրոյով	7,141,020	7,141,020	7,141,020
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25,932,625	25,932,625	25,932,625
	38,062,908	**38,062,908**	**38,062,908**

2021թ. **հազ. դրամ**	**Հաշվեկշռային արժեք**	**Պայմանագրային դրամական հոսքեր**	**Մինչև 2 ամիս**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից			
ԱՄՆ դոլարով	6,086,706	6,086,706	6,086,706
Եվրոյով	9,224,370	9,224,370	9,224,370
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,597,943	4,597,943	4,597,943
	19,909,019	**19,909,019**	**19,909,019**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում էին ընթացիկ ակտիվները 17,879,599 հազար դրամով (2021թ-ին՝ 13,777,511 հազար դրամով): Միջանկյալ մայր ընկերությունն իր մտադրություն է հայտնել տրամադրել ֆինանսական և այլ աջակցություն Ընկերությանը մոտ ապագայում: Ընդհանուր պարտավորություններից 36,115,589 հազար դրամ գումարով պարտավորությունները (2021թ-ին՝ 38,185,252 հազար դրամ) Բաժնետերերի խմբի ընկերությունների հետ են:

Քլիրինգային կենտրոն

2022թ-ից Ընկերությունը սկսել է օգտվել Բաժնետերերի խմբի քլիրինգային կենտրոնից՝ վճարումների մշակման համար: Խմբի ընկերությունների հետ առուվաճառքի գործառնություններն այժմ համախմբվում և գրանցվում են կենտրոնում, և միայն զուտ վճարվելիք/ստացվելիք գումարներն են փոխանցվում կամ ստացվում Ընկերության կողմից:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արժութային ռիսկին Ընկերության ֆունկցիոնալ արժույթի այն արժույթի միջև անհամապատասխանության չափով, որով արտահայտված են վաճառքները, գնումները և փոխառությունները: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով:

Ընկերությունը չի հեջավորում իր ենթարկվածությունն արժութային ռիսկին:

Ենթարկվածությունն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունն՝ ըստ անվանական գումարների:

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2022թ.**	**Եվրոյով արտահայտված 2022թ.**	**Ռուբլով արտահայտված 2022թ.**	**Այլ արժույթով արտահայտված 2022թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,732	23,563	72,274	465
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	328,139	4,930,610	6,238	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(11,502,010)	(3,966,634)	(9,388,077)	(50,574)
Վարկեր և փոխառություններ	(4,989,263)	(7,141,020)	-	-
Համախառն ենթարկվածություն	**(16,105,402)**	**(6,153,481)**	**(9,309,565)**	**(50,109)**

հազ. դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ.**	**Եվրոյով արտահայտված 2021թ.**	**Ռուբլով արտահայտված 2021թ.**	**Այլ արժույթով արտահայտված 2021թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	992	14,868	1,658	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	370,655	5,433,265	-	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(3,522,495)	(117,749)	(122,855)	(4,860)
Վարկեր և փոխառություններ	(6,086,706)	(9,224,370)	-	-
Համախառն ենթարկվածություն	**(9,237,554)**	**(3,893,986)**	**(121,197)**	**(4,860)**

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	**Միջին փոխարժեք**		**Ստորոգ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
1 ԱՄՆ դոլար	434.86	503.2	393.57	480.14
1 եվրո	459.48	595.18	420.06	542.61
1 ռուբլի	6.48	6.83	5.59	6.42
1 չինական յուան	65	77.98	56.521	75.41

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր 10% աճը (նվազումը) հետևյալ արտարժույթների նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	**Աճ**	**Նվազում**
31 դեկտեմբերի 2022թ.		
ԱՄՆ դոլար (10% փոփոխություն)	1,610,540	(1,610,540)
Եվրո (10% փոփոխություն)	615,348	(615,348)
Ռուբլի (10% փոփոխություն)	930,957	(930,957)
Այլ (10% փոփոխություն)	5,011	(5,011)
31 դեկտեմբերի 2021թ.		
ԱՄՆ դոլար (10% փոփոխություն)	923,755	(923,755)
Եվրո (10% փոփոխություն)	389,399	(389,399)
Ռուբլի (10% փոփոխություն)	12,120	(12,120)
Այլ (10% փոփոխություն)	486	(486)

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը չի ենթարկվում իր դրամական միջոցների հոսքերի վրա շուկայում գերակայող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը և չունի լողացող տոկոսադրույքով ակտիվներ և պարտավորություններ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարությունը չի կիրառում պաշտոնապես ձևակերպված քաղաքականություն տոկոսադրույքային ռիսկը կառավարելու համար, քանի որ գտնում է, որ այդ ռիսկն էական ազդեցություն չունի Ընկերության գործունեության վրա:

Իրական արժեքի զգայնության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար

Ընկերությունը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

21 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ունի ապահովագրական ծածկույթ իր արտադրական շենքերի և գործունեության ընդհատման համար, այնուամենայնիվ, այն ապահովագրված չէ երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշ դեպքերը կամ պատահարները կարող են զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Շրջակա միջավայրի պահպանություն

Ղեկավարության կարծիքով Ընկերության գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության պահանջներին, այդ իսկ պատճառով, ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի էական պարտավորություններ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը զարգացման փուլում է Հայաստանում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների փոփոխությունները կարող են առաջացնել էական պարտավորություններ ապագայում:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիների համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը հարկային տարում գերազանցում է 200 միլիոն դրամը.

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ վերջիններիս կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22 Հանձնառություններ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 524,339 հազար դրամ գումարով կապիտալ հանձնառություններ (2021թ-ին՝ 779,638 հազար դրամ):

23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հսկողություն

Ընկերության անմիջական մայր ընկերությունն է «ՌՈՒՍԱԼ ԼԻՄԻԹԻԴ» ընկերությունը:

Ընկերության միջանկյալ մայր ընկերությունն է «UC RUSAL» IPJSC («ՌՈՒՍԱԼ միացյալ ընկերություն» միջազգային հրապարակային բաժնետիրական ընկերություն):

Ընկերության վերջնական մայր ընկերությունն է «EN+ ԳՐՈՒՊ» ՄՀԲԸ-ն: Չկա որևէ ֆիզիկական անձ, որը հնարավորություն ունի հսկողություն իրականացնել Ընկերության նկատմամբ:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերի կազմում (Ծանոթագրություն 8):

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**315,295**	**302,171**

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

(i) Հասույթ

հազ. դրամ	**Գործարքի գումարը 2022թ.**	**Գործարքի գումարը 2021թ.**	**Մնացորդը 2022թ.**	**Մնացորդը 2021թ.**
Ապրանքների վաճառք				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Ռուսալ Թրեյդինգ Ինտերնեյշնլ» ՍՊԸ	55,224,246	59,109,522	4,999,660	(13,728,163)
«Ռուսալ միացյալ ընկերություն - առևտրի տուն»	194,095	55,341	155,780	-
«Ռուսալ - Սայանսկայա ֆոլգա» ՍՊԸ	134,304	-	45,169	-
Այլ վաճառքներ				
«Ուրալսկայա ֆոլգա» ԲԸ	56,360	-	6,238	-
«ՍԿԱԴ» ձուլման և մեխանիկական գործարան	2,058	-	-	-
«Ռուսալ Սայանալ» ԲԸ	53,124	-	-	-
	55,664,187	**59,164,863**	**5,206,847**	**(13,728,163)**

(ii) Ծախսեր

հազ. դրամ	**Գործարքի գումարը 2022թ.**	**Գործարքի գումարը 2021թ.**	**Մնացորդը 2022թ.**	**Մնացորդը 2021թ.**
Նյութերի գնում				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Ռուսալ միացյալ ընկերություն - առևտրի տուն»	(24,879,550)	(39,617,559)	(1,571,585)	(3,272,363)
«Ռուսալ Թրեյդինգ Ինտերնեյշնլ» ՍՊԸ	(11,452,877)	(8,687)	(6,715,043)	-
«Ուրալսկայա ֆոլգա» ԲԸ	(478,626)	(121,267)	(30,061)	-
«Սիբինֆոսոֆտ» ՍՊԸ	(129,007)	(8,759)	35,990	-
«Կրասնոյարսկի ալյումինի գործարան» ԲԸ	(11,571)	(45,458)	-	-
«Ռուսալ Սայանալ» ԲԸ	(117,486)	(9,018)	(6,415)	-
«Ռուսալ Մենեջմենթ» ԲԸ	-	(10,488)	-	-
«Ռուսալ Ուրալ»	(24,252)	-	-	-
Այլ ծախսեր				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Սիբինֆոսոֆտ» ՍՊԸ	(22,604)	(13,813)	(6,696)	(7,691)
«Վրեմյա ՏՏ» ՍՊԸ	(2,490)	(3,631)	(2,285)	(830)
	(37,118,463)	**(39,838,680)**	**(8,296,095)**	**(3,280,884)**

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման հաշվետու ամսաթվից հետո երկու ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(iii) Վարկեր և փոխառություններ

հազ. դրամ	Փոխառության գումարը 2022թ.	Փոխառության գումարը 2021թ.	Մնացորդը 2022թ.	Մնացորդը 2021թ.
Ստացված վարկեր և փոխառություններ				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Սի Չայկա Քորփորեյշընն»	-	-	(12,130,283)	(15,311,076)
	-	**-**	**(12,130,283)**	**(15,311,076)**

Մայր ընկերության այլ դուստր ընկերություններից ստացված փոխառությունները տոկոսակիր չեն և ենթակա են մարման ըստ պահանջի՝ այդ մասին երեսուն բանկային օր առաջ ծանուցում ստանալով:

(iv) Այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	Գումարը 2022թ.	Գումարը 2021թ.	Մնացորդը 2022թ.	Մնացորդը 2021թ.
Այլ կրեդիտորական պարտքեր				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Ռուսալ Թրեյդինգ Ինտերնեյշնլ» ՍՊԸ	-	-	(15,617,229)	-
	-	**-**	**(15,617,229)**	**-**

24 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

Գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ ուժի մեջ են մտել 2022թ. հունվարի 1-ից, սակայն այդ փոփոխությունները նշանակալի ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

25 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

26 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ի (գ) կետում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ օգուտի, թե՝ զուտ կորստի:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը դրամային հոդվածների գծով իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի, որը ճշգրտված է ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված՝ արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերահաշվարկից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(i) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը բիզնեսի միավորում չէ և գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ հետաձգված հարկային ակտիվից օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և այդ հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող իրավաբանական անձից կամ տարբեր հարկվող իրավաբանական անձանցից, բայց նրանք մտադիր են մարումն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

(զ) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է կշռված միջին արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(է) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, ակտիվի զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և օգտագործման համար պիտանի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և օգտագործման համար պիտանի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած վերջինիս մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն ավելի ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

– շենքեր	50-70 տարի
– մեքենաներ և սարքավորումներ	3-50 տարի
– փոխադրամիջոցներ	7 տարի
– տնտեսական միջոցներ	3-5 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ը) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի և պարտքային արժեթղթերի սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնավորման պահին: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումն իրականացվում է, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքում ներդրումը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի որոշում կայացնել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այս որոշումը կայացվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի ներքո պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ստանալ պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտը, ապահովել տոկոսադրույքների որոշակի կառուցվածք, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են տվյալ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի ներքո պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այդ նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, բանկային օվերդրաֆտները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են («նշանակալի վերափոխում»), սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործվող ուղեցույցին համանման ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հիմք ընդունելով հետևյալ որակական գործոնները.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխությունը,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխությունը,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառումը):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող վերափոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող չեն, վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այդ դեպքում, Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող

գումարը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ վերափոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող են: Այս դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե վերափոխումը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է վերափոխման (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում վերափոխման (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ հաստատուն տոկոսադրույքների փոփոխությունները բանկերի կողմից ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Ընկերությունը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Ընկերությունը հաշվառում է կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ընկերությունն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբերվող են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների վերափոխումը հաշվառվում է որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորուստի մաս: Եթե փոխանակումը կամ վերափոխումը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխացված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Ընկերությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են, որի դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարը միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(vi) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները: Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են մարման ըստ պահանջի և կազմում են դրամական միջոցների կառավարման անբաժանելի մասը:

(vii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ:

(թ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խմբային հիմունքով գնահատվող առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ պատվիրատուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 120 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների գումարն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասն է, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Ընկերությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, օրինակ՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,

- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 365 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման նանցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում էր յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա էր որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող էր արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա էր, ապա գնահատվում էր ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին կամ դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում էին շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները նվազեցնում են դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա էր արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր էր, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(h) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(l) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

(i) Ընկերությունը՝ որպես վարձակալ

Վարձակալության սահմանմանը համապատասխանող վարձակալություն պարունակող պայմանագրեր չկան:

27 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(a) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և ապագործարկման պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Մյուս բոլոր գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխությունների կիրառումը նշանակալի ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(b) Պարտավորությունների դասակարգումն ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

2020թ-ին հրապարակված փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանել պարտավորության ընթացիկ կամ ոչ ընթացիկ լինելը որոշելու պահանջները և կիրառելի են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, ՀՀՄՍԽ-ն հետագայում առաջարկել է ՀՀՄՍ 1-ի լրացուցիչ փոփոխություններ և 2020թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի հետաձգում մինչև 2024թ. հունվարի 1-ը: Այս շարունակական զարգացումների պատճառով Ընկերությունը չի կարող որոշել այդ փոփոխությունների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում: Ընկերությունը հետևում է զարգացումներին:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՍՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՍՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)